ԲՄԿ ՊՈՒՀ ՌՈՒՍ-ՀԱՅԿԱԿԱՆ (ՍԼԱՎՈՆԱԿԱՆ)
ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ՝

Իրավունքի և
քաղաքականության
Ինստիտուտի տնօրեն
Մ.Ա. Քայաշյան

"12" հոկտեմբերի 2022 թ.

Ինստիտուտ՝ Իրավունքի և քաղաքականության
Ամբիոն՝ Քրեական իրավունքի և քրեական դատավարության իրավունքի

Հեղինակ՝ Ղուկասյան Հ. Հ.

ԴԱՍԸՆԹԱՑԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Դասընթաց՝ Անձի հետախուզումը, ճանաչումն ու փորձաքննությունը՝ ըստ արտաքին հատկանիշների

Մագիստրոսական ծրագիր՝ 042802.03.7 Կրիմինալիստիկա

Դասիչ մասնագիտություն՝ 042802.00.7 Իրավական ուսումնասիրություններ

ԵՐԵՎԱՆ

1. **Ներածություն**

Այս դասընթացը հանդիսանում է կրիմինալիստիկայի տեխնիկայի ճյուղ, որն ուսումնասիրում և ներկայացվում է հատուկ մասնագիտացված իրավաբանական կրթություն ստացող ունկնդիրներին, մասնավորապես քրեագիտության ոլորտի մասնագետներին:

Հաբիտոսկոպիան այսօր արդիական է հանցավորության դեմ պայքարի գործում, այսպիսի հարցերի լուսաբանման նպատակով, ինչպիսիք են հանցագործության մեջ կասկածվող, նույնականացման իր արտաքին պատերի, նրա արտաքին հատկանիշների, նրա վարքագծի, անատոմիական հատկանիշների, շարժողական հատկանիշների (ժեստիկուլյացիայի) և այլ նմանատիպ հատկանիշների հիման վրա:

Այս դասընթացում բացահայտվում են ինչպես տեսական, այնպես էլ գործնական անձի արտաքին հատկանիշներով նույնականացման մեթոդները, հնարքները, վերը նշված հատկանիշների վերաբերյալ ստացված տեղեկությունների (ինֆորմացիաների) վերցման, ֆիքսման և հետագա գնահատման եղանակները, որոնք ունեն էական նշանակություն դատական հաբիտոսկոպիայի փորձաքննության գործնական կիրառության համար:

2. **Դասընթացի նպատակը և խնդիրը.**

Դասընթացի նպատակն է զինել ուսանողներին հատուկ գիտելիքներով՝ ըստ արտաքին հատկանիշների անձի հետախուզման, ճանաչման գործընթացը ապահովելու համար, օգտագործել գիտական մեթոդիկաների և տեխնիկական միջոցների հնարավորությունները ճանաչման փորձաքննությունը արդյունավետ իրականացնելու համար:

Դասընթացի խնդիրներն են՝ անձի հետախուզումն իրականացնել ըստ արտաքին հատկանիշների, ապահովել անձի ճանաչումը հիմնվելով նրա արտաքին հատկանիշների վրա, հետախուզման հիմքերի ուսումնասիրությունը, նշված գործողությունների արդի վիճակի ուսումնասիրությունը, ճանաչման փորձաքննության գիտական հիմքերի և մեթոդների խորացված ուսումնասիրությունը, անձի

հայտնաբերման և հետազոտման ժամանակակից մեթոդների և միջոցների խորացված ուսումնասիրություն՝ հանցագործությունների բացահայտման, հետաքննության և կանխարգելման նպատակով, անձի հետախուզման և ճանաչման համար կարևոր նշանակություն ունեցող հատկանիշների հայտնաբերումը, ամրագրումը և նախնական ուսումնասիրությունը:

2.1. Կրթական վերջնարդյունքները

Դասընթացի հաջող ավարտին ուսանողները **պետք է.**

իմանան՝

- հաբիտոսկոպիայի տեսական հիմունքները,
- հաբիտոսկոպիայի մեթոդների և միջոցների համակարգ,
- հաբիտոսկոպիայի հետազոտությունների օբյեկտների համակարգ,
- հաբիտոսկոպիայի նույնականացման և ախտորոշման դրույթները,
- հաբիտոսկոպիայի փորձաքննությունների և հետազոտությունների անցկացման մեթոդիկա;

կարողանան՝

- իրականացնել արտաքին հատկանիշներով անձի նույնականացում,
- անձի արտաքին տեսքի սուբյեկտիվ նկարագրում;

ունակ լինեն՝

- հայտնաբերել և արձանագրել դեմքի առանձնահատկությունները արձանագրությունում,
- սահմանել հետքերի ձևավորման մեխանիզմ, գնահատել դրա վրա տարբեր գործոնների ազդեցությունը,
- իրականացնել անձի արտաքին հատակնիշներով փորձաքննություններ և հետազոտություններ:

2.2. Դասընթացի աշխատատարության բաշխումն ըստ ուսումնական աշխատանքի տեսակների (ակադեմիական ժամերով)

Ուսումնական աշխատանքների տեսակները	Ամբող ջը, ակ. ժամ.	Բաշխում ըստ կիսամյակների					
		1 Կիս.	2 Կիս.	3 Կիս.	4 Կիս.	5 Կիս.	6 Կիս.
1	2	3	4	5	6	7	8
1. Ըստ կիսամյակի ընդհանուր դասընթացի ուսուցման ծանրաբեռնվածությունը	**108**	**108**					
1.1. Լսարանային պարապմունքներ:	**18**	**18**					
1.1.1. Դասախոսություններ	**10**	**10**					
1.1.2. Սեմինարներ	**8**	**8**					
1.2. Ինքնուրույն աշխատանք	**90**	**90**					
Ամփոփիչ ստուգում (քննություն, ստուգարք)	**Ստուգ արք**	**Ստու գարք**					

2.3.Դասընթացի թեմատիկ պլան

Դասընթացի բաժինները և թեմաները	Ընդհանուր (ակ. ժամ)	Դասախոսություններ (ակ. ժամ)	Սեմինար (ակ. ժամ)	Պարապմունքների այլ տեսակներ (ակ. ժամ)
Թեմա 1. Հաբիտոսկոպիայի ընդհանուր հիմունքներ	16	2	2	12
Թեմա 2. Արտաքին հատկանիշներով անձի նույնականացման հակիրճ պատմական ակնարկ				
Թեմա 3. Անձի արտաքին հատկանիշներով քրեագիտության ուսմունքի հասկացությունը	15	2	1	12
Թեմա 4. Հաբիտոսկոպիայում ուսումնասիրվող օբյեկտները	15	2	1	12
Թեմա 5. Անձի արտաքին տեսքի նկարագրությունը (պատկերումը)	14	1	1	12
Թեմա 6. Անձի արտաքին հատակնիշներով փորձաքննություն	16	1	1	14
Թեմա 7. Բանավոր խոսքի միջոցով պատկերների մեթոդիկայի կիրառումը	16	1	1	14

Թեմա 8. Քննչական տակտիկայի հասկացությունը, տեսակները	**16**	**1**	**1**	**14**
Ընդամենը	**108**	**10**	**8**	**90**

3. Դասընթացի բաժինները և թեմաները

Թեմա 1. Հաբիտոսկոպիայի ընդհանուր հիմունքներ:

Թեմայի շրջանակներում քննարկվում է հաբիտոսկոպիա տերմինի ծագումը, նրա հասկացությունը, նպատակները, խնդիրները, պահանջները:

Թեմա 2. Արտաքին հատկանիշներով անձի նույնականացման հակիրճ պատմական ակնարկ:

Բանավոր խոսքի և լուսանկարահանման եղանակով անձի նկարագրման մեթոդները ըստ՝ Բերտրանի բանավոր խոսքի և լուսանկարահանման եղանակով անձի նկարագրման մեթոդները ըստ՝ Արչիբալդ Ռուդոլֆ Ռեխսի, բանավոր խոսքի և լուսանկարահանման եղանակով անձի նկարագրման մեթոդները ըստ՝ Ն.Ս. Բոկարիուսի:

Թեմա 3. Անձի արտաքին հատկանիշներով քրեագիտության ուսմունքի հասկացությունը:

Հաբիտոսկոպիայի առարկան և հասկացությունը; քրեագիտական ուսմունք անձի արտաքին տեսքի վերաբերյալ հասկացություն; անձի արտաքին տեսքի դասակարգումը, խնդիրները, որոնք լուծվում են այս ուսմունքի միջոցով:

Անձի արտաքին հատկանիշների և պատկերման ընդհանրությունները ու հատկությունները; անձի արտաքին նկարագրման անհատական հատկանիշները; անձի արտաքին հատկանիշների համակարգը և նրա տարրերը; անձի արտաքին տեսքի հատկանիշներն ու նրա առանձին տարրերը; արտաքին հատկանիշները նկարագրելու կանոնները և նրան վերագրված պարտադիր պահանջները:

Թեմա 4. Հաբիտոսկոպիայում ուսումնասիրվող օբյեկտները

Հաբիտոսկոպիայի համակարգի բաղկացուցիչ մասերը: Կայունությունը որպես նույնականացման նախադրյալ անձի արտաքին հատկանիշներում: Համարժեքությունը որպես նույնականացման նախադրյալ անձի արտաքին հատկանիշներում: Ամբողջականությունը որպես նույնականացման նախադրյալ անձի արտաքին հատկանիշներում: Անհատականությունը որպես նույնականացման նախադրյալ անձի արտաքին հատկանիշներում: Հարաբերական կայունությունը որպես նույնականացման նախադրյալ անձի արտաքին հատկանիշներում: Անձի արտաքին հատկանիշների փոփոխման օրինաչափությունները:

Թեմա 5. Անձի արտաքին տեսքի նկարագրությունը (պատկերումը)

Անձի արտաքին հատկանիշների օբյեկտիվ արտահայտությունների հասկացությունը և տեսակները, օբյեկտիվ պատկերները: Անձի արտաքին հատկանիշների սուբյեկտիվ արտահայտությունների հասկացությունը և տեսակները, սուբյեկտիվ պատկերները: Անձի արտաքին տեսքի վերականգնումը սուբյեկտիվ նկարագրության միջոցով և դրա միջոցով ստացված տեղեկությունների ֆիքսումը: Հետմահու դիմակների օգտագործման առանձնահատկությունները, անձի արտաքին հատկանիշների ինֆորմացիայի ֆիքսման համար: Անձի դեմքի վերականգնումը, կմախքի (գանգի) և ոսկորի մասունքների միջոցով և դրա առանձնահատկությունները: Որակյալ նկարագրման չափանիշները:

Սուբյեկտիվ նկարագրման տակտիկան, տեխնիկան և մեթոդիկան: Սուբյեկտիվ նկարագրության օգտագործումը իրավապահ մարմինների պրակտիկայում: Մտավոր պատկերի հասկացությունը: Անձի մտավոր պատկերի վրա ազդող գործոնները: Ժամանակավոր գործոնները, որոնք ազդում են ականատեսի մտավոր հիշողության վավերականության վրա:

Թեմա 6. Անձի արտաքին հատակնիշներով փորձաքննություն

Փորձաքննության ընդունման կարգը: Փորձագետին առաջադրված հարցեր: Փորձաքննության կատարումը: Փորձագիտական եզրակացություն: Փորձաքննության միջոցով լուծվող հարցեր: Փորձաքննության եզրակացության ստուգումը և գնահատումը: Դեմքի առանձնահատկությունները: Դեմքը ըստ ձևի: Դեմքի այլ ձևեր: Դիմագծեր, ճակատային գիծ: Մազն ըստ ձևի, մազն ըստ երկարության: Հոնքեր. տեսակները, առանձնահատկությունները և համաչափությունները: Հոնքերն աչքի համեմատ, ըստ դիրքի, ըստ լայնության, ըստ միմյանց հեռավորության: Աչքերը և նրա մասերը, տեսակները: Քիթը և նրա մասերը, տեսակները, քթային միջնամասը: Քթի թիկնակը և նրա տեսակները, ըստ ուրվագծի, ըստ հիմքի դրության, ըստ ձևի, ըստ քթարմատի խտության: Շրթունքները, նրա տեսակները, վերին և ստորին շրթունքները և դրանց տեսակները: Բերանը. մեծությունը, խոռոչի կառուցվածքը: Ականջները. դրա տեսակները, ըստ մեծության կառուցվածքի, ըստ դեմքի համաչափության, ըստ ականջի բլթակների, ըստ ականջախեցու ցցվածության, ըստ ուրվագծի, ըստ բլթակի դիրքի: Կզակը և նրա տեսակները:

Թեմա 7. Բանավոր խոսքի միջոցով պատկերների մեթոդիկայի կիրառումը իրավապահ և ՕՀԳ մարմինների կողմից, մասնավորապես անձի հետախուզման ճանաչման և փորձաքննության անցկացման գործում:

Բանավոր խոսքի անհատական նշանների քրեագիտական նշանակությունը: Բանավոր խոսքի նշանակությունը ճշգրիտ պատկերներ ստանալու համար: Լուսանկարի ճանաչման համար ներկայացվող տակտիկան ըստ բանավոր խոսքի նշանների: Պատկերների մեթոդիկայի կիրառման արդյունավերությունը իրավապահ և ՕՀԳ մարմինների աշխատանքում, հատկապես անձի հետախուզման ճանաչման և փորձաքննության իրականացման գործում:

Թեմա 8. Քննչական տակտիկայի հասկացությունը, տեսակները, խնդիրները և դրանց կազմակերպման առանձնահատկությունները:

Անձին հետախուզում հայտարարելը և դրանց ներկայացվող քրեադատավարական պահանջները: Ականատեսների և վկաների հարցաքննությունը և դրանց ներկայացվող քրեադատավարական պահանջները: Անձի և դիակի ճանաչումը, դրանց ներկայացվող քրեադատավարական պահանջները: Առերեսումը և դրան ներկայացվող քրեադատավարական պահանջները: Քննչական փորձարարություն: Հաբիտոսկոպիայի առջև դրված խնդիրների լուծման համար օգտագործվող համակարգիչների և նոր տեխնոլոգիաների օգտագործումը և այդ ծրագրերի հետ ծանոթացումը: Արտաքին հատկանիշների վերաբերյալ տեղեկությունների հավաքումը և դրանց օգտագործումը վերը նշված խնդիրների լուծման համար:

Վերջնական ստուգարքի հարցեր

1. Հաբիտոսկոպիայի ընդհանուր հիմունքներ:
2. Հաբիտոսկոպիայի հասկացությունը, առարկան և օբյեկտները:
3. Հաբիտոսկոպիայի խնդիրները և համակարգը:
4. Հաբիտոսկոպիա տերմինի ծագումը, նրա հասկացությունը, նպատակները,:
5. Արտաքին հատկանիշներով անձի նույնականացման հակիրճ պատմական ակնարկ:
6. Անձի արտաքին հատկանիշներով քրեագիտության ուսմունքի հասկացությունը:
7. Քրեագիտական ուսմունք անձի արտաքին տեսքի վերաբերյալ, հասկացություն:
8. Անձի արտաքին տեսքի դասակարգումը, խնդիրները, որոնք լուծվում են այս ուսմունքի միջոցով:
9. Անձի արտաքին հատկանիշների և պատկերման ընդհանրությունները և հատկությունները:
10. Անձի արտաքին նկարագրման անհատական հատկանիշները:
11. Անձի արտաքին հատկանիշների համակարգը և նրա տարրերը:
12. Անձի արտաքին տեսքի հատկանիշներն ու նրա առանձին տարրերը:
13. Արտաքին հատկանիշները նկարագրելու կանոնները և նրան վերագրված պարտադիր պահանջները:

14. Հաբիտոսկոպիայում ուսումնասիրվող օբյեկտները:
15. Հաբիտոսկոպիայի համակարգի բաղկացուցիչ մասերը:
16. Կայունությունը որպես նույնականացման նախադրյալ անձի արտաքին հատկանիշներում:
17. Համարժեքությունը որպես նույնականացման նախադրյալ անձի արտաքին հատկանիշներում:
18. Ամբողջականությունը որպես նույնականացման նախադրյալ անձի արտաքին հատկանիշներում:
19. Անհատականությունը որպես նույնականացման նախադրյալ անձի արտաքին հատկանիշներում:
20. Հարաբերական կայունությունը որպես նույնականացման նախադրյալ անձի արտաքին հատկանիշներում:
21. Անձի արտաքին հատկանիշների փոփխման օրինակությունները:
22. Անձի արտաքին տեսքի նկարագրությունը (պատկերումը):
23. Անձի արտաքին հատկանիշների օբյեկտիվ արտահայտությունների հասկացությունը և տեսակները, օբյեկտիվ պատկերները:
24. Անձի արտաքին հատկանիշների սուբյեկտիվ արտահայտությունների հասկացությունը և տեսակները:
25. Որակյալ նկարագրման չափանիշները:
26. Սուբյեկտիվ նկարագրման տակտիկան, տեխնիկան և մեթոդիկան:
27. Սուբյեկտիվ նկարագրության օգտագործումը իրավապահ մարմինների պրակտիկայում:
28. Մտավոր պատկերի հասկացությունը:
29. Անձի մտավոր պատկերի վրա ազդող գործոնները:
30. Ժամանակվոր գործոնները, որոնք ազդում են ականատեսի մտավոր հիշողության վավերականության վրա:
31. Անձի արտաքին հատակնիշներով փորձաքննություն:
32. . Փորձաքննության ընդունման կարգը:

33. Փորձագետին առաջադրված հարցեր:
34. Փորձաքննության կատարումը:
35. Փորձագիտական եզրակացություն:
36. Փորձաքննության միջոցով լուծվող հարցեր:
37. Փորձաքննության եզրակացության ստուգումը և գնահատումը, Դեմքի առանձնահատկությունները:
38. Բանավոր խոսքի միջոցով պատկերների մեթոդիկայի կիրառումը իրավապահ և ՕՀԳ մարմինների կողմից, մասնավորապես անձի հետախուզման ճանաչման և փորձաքննության անցկացման գործում:
39. Քննչական տակտիկայի հասկացությունը, տեսակները, խնդիրները և դրանց կազմակերպման առանձնահատկությունները:
40. Անձին հետախուզում հայտարարելը և դրանց ներկայացվող քրեադատավարական պահանջները:
41. Անձի և դիակի ճանաչումը, դրանց ներկայացվող քրեադատավարական պահանջները:
42. Առերեսումը և դրան ներկայացվող քրեադատավարական պահանջները:
43. Քննչական փորձարարություն:
44. Հաբիտոսկոպիայի առջև դրված խնդիրների լուծման համար օգտագործվող համակարգիչների և նոր տեխնոլոգիաների օգտագործումը:
45. Արտաքին հատկանիշների վերաբերյալ տեղեկությունների հավաքումը և դրանց օգտագործումը վերը նշված խնդիրների լուծման համար:

4. Գրականության ցանկ

Հիմնական գրականություն

1. ՀՀ օրենքը «Զենքի մասին», ընդունված է Ազգային Ժողովի կողմից 3 հուլիսի 1998 թ.
2. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային Ժողովի կողմից *1 հուլիսի 1998 թ.*

3. ՀՀ քրեական դատավարության օրենսգիրք, ընդունվել է Ազգային Ժողովի կողմից 30.06.2021 *թ.*
4. Օհանյան Լ. Կրիմինալիստիկական հաբիտոսկոպիա | Գիտելիք թիվ 4, Երևան 2006, էջ 13-17.
5. Մելքոնյան Դ. Ապացույցների թույլատրելիության պայմանների ընդհանուր բնութագիրը | Իրավագիտության հարցեր, թիվ 4, 2005, էջեր 47-55.
6. Ենգիբարյան Վ. Առանձին քննչական գործողությունների կատարման տակտիկա: Կրիմինալիստիկական տակտիկա | Գիտագործնական ձեռնարկ Երևան, Թասկ ՍՊԸ, 2018, 732 էջ
7. Ենգիբարյան Վ. Գ. Հանցագործությունների քննության մեթոդիկա: Կրիմինալիստիկական մեթոդիկա: | Դասագիրք բուհերի իրավաբանական ֆակուլտետների ուսանողների համար՝ երաշխավորված ՀՀ ԿԳՆ կողմից, Երևան, Թասկ, 2017, 608 էջ
8. Ենգիբարյան Վ. Գ. Հանցագործությունների քննության կազմակերպման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմքերը | Մենագրություն, Երևան, Անտարես, 2016, 256 էջ
9. Արթուր Չախոյան Մասնագետի հատուկ գիտելիքների և դրանց կիրառման քրեադատավարական և կրիմինալիստիկական հիմնախնդիրները | ԵՊՀ հրատ., Երևան, 200 էջ:
10. Ենգիբարյան Վ. Գ.Առանձին տեսակի հանցագործությունների քննության մեթոդկիա (Կրիմինալիստիկական մեթոդիկա) | Ձեռնարկ, Երևան, ԵՊՀ հրատարակչություն, 2009, 416 էջ
11. «Ժամանակակից գիտական տեխնոլոգիաների և մեթոդների կիրառումը փորձաքննության ոլորտում» Միջազգային գիտաժողովի նյութեր, ԵրևանԾաղկաձոր, 16-17 հունիսի 2015թ./ ՀՀ ԳԱԱ Փորձաքննությունների ազգային բյուրո, խմբ. Խորհուրդ՝ Ա.Ջավադյան և ուրիշ.- Երևան-Ծաղկաձոր, 2015, 245 էջ:
12. «Դատափորձագիտական գործունեության արդի հարցերը, դատական փորձագիտության եվ քրեագիտության ժամանակակից խնդիրները, զարգացման միտումներն ու հեռանկարները» միջազգային գիտագործնական գիտաժողովի նյութերի (թեզիսների) ժողովածու նվիրված հայաստանի հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի«փորձաքննությունների ազգային բյուրո» պոակ-ի հիմնադրման 15-ամյակին 2019թ. սեպտեմբերի 25-27, Երևան

13. Криминалистическая идентификация человека по признакам внешности : учебное пособие для вузов / А. М. Зинин [и др.] ; под редакцией А. М. Зинина. — 2-е изд. — Москва : Издательство Юрайт, 2021. — 323 с.

Լրացուցիչ գրականություն

14. Россинская Е.Р., Зинин А.М., Подволоцкий И.Н. и др. Габитоскопия и портретная экспертиза. Учебник. - М.: Норма, 2018. - 288 с.
15. Дмитриев, Е. Н. Габитоскопическая система в розыске и опознание лиц по признакам внешности / Е. Н. Дмитриев // Е. Ф. Буринский и современная криминалистика: сб. мат-лов конф. – Ижевск, 2000. – С. 93–102.
16. Дмитриев, Е. Н. Габитоскопическая система в розыске и опознание лиц по признакам внешности / Е. Н. Дмитриев // Е. Ф. Буринский и современная криминалистика: сб. мат-лов конф. – Ижевск, 2000. – С. 93–102.

5. Ստուգումների անցկացման ձևը և գնահատման չափանիշները:

Խմբային քննարկում. Նպատակը՝ մտքերի փոխանակում կոնկրետ առաջադրված տեսական հիմնախնդիրների վերաբերյալ:

Գնահատման չափանիշները՝ տեսական պատրաստվածություն, հղումներ հեղինակներին, սեփական կարծիքի հիմնավոր և տրամաբանական փաստարկվածություն, ակադեմիական ակտիվություն, գիտական էթիկայի պահպանման կարողություն:

Ելույթներ ըստ թեմայի. Նպատակը՝ թեմայի կամ հարցի խորացված ուսումնասիրում:

Գնահատման չափանիշները՝ պլանի առկայություն և դրան հետևելու կարողություն, տեսական և իրավական աղբյուրների օգտագործման էթիկա, հղումների ճշգրտություն, տեսակետների պատճառաբանվածություն:

Թեստավորում. Նպատակը՝ ստուգել ուսանողների գիտելիքները:

Վերջնական քննություն. Նպատակը՝ ստուգել և գնահատել ուսանողների գիտելիքները: